VIII

ԱՆԱՆՈՒՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ (XVI Դ.)

1551 թվականին Վալախիայում (Ռումինիայում), Սուչավա քաղաքում և մի քանի այլ վայրերում հայերի դեմ կազմակերպված հալածանքների մասին Մինաս Թոխաթեցու «Ողբ ի վերայ Օլախաց երկրի հայերուն» բանաստեղծությունից բացի,[1] մեզ հասել են նաև մի քանի համառոտ այլ վկայություններ։ Զամչյանը 1551 թ. դեպի Հայաստան կատարած շահ Թահմազի արշավանքի և ավերածությունների մասին գրելուց հետո ավելացնում է, որ նույն ժամանակ Մոլդավիայի Ստեփան իշխանը հալածանք սկսեց իր երկրում բնակվող հայերի դեմ։ Տեղեկությունը Զամչյանը քաղել է մի հիշատակարանից,[2] սակայն աղբյուրը չի նշել։ Այս հիշատակարանի առթիվ Պըշըքլյանը գրում է. «Այս անծանօթ ձեռքէ գրուած յիշատակարանը կերեւայ թէ Մինաս սարկաւագին ողբերգութիւնն ի բաց առնելով՝ Հայոց քով մի միակն եղած բլլա, որ Ստեփան Ռարէսին անագորոյնութեան վերայ կը խօսի»։[3]

Սույն դեպքերի մասին «Տարեգիրք Կամենիցայ»-ի մեջ 1551 թվականի տակ նույնպես կարդում ենք. «Ի թվին Ռ (1551) Օլախի երկրին Շտեֆան պարոնն՝ Օլախի երկրին ղհայերն եհան ի հաւատէ, և զեկեղեցեստան քակեց զամէն բովանդակ»։[4]

Ալիշանը վերոհիշյալ հատվածին որպես լրացում տողատակ գրում է. «Այս ծանօթ պժգալի գիպուածին վրայօք՝ դար մի վերջը Երեմիա չէլէպի Քէօմիւրճեան, եղբայր Երան. Կոմիտասայ, գրէ այսչափս. «Ի թուականութեանս Հայոց Ռ-ին ի Սէչով քաղաք երկիր Ուլախին, թագաւորն Ստեփան՝ դաւանութեամբ Յունաց, բռնութեամբ կալաւ հազար տուն ի Հայոց ազգէ, գրով, դարձուցանել յաղանդս իւր, որք ընդ նորա իշխանութեամբ էին, և որք ոչ դարձան՝ նահատակեցան։ Յորոց մինն ի բազմաց Թաչատուր քահանայ ոմն, որ զերկու աչսն եհան, և զերկու ձեռսն և զոտսն և զլեզուս և զհոտոտելիս և զշրթունսն՝

---

[1] Սույն բանաստեղծությունը գտնվում է մեզ հայտնի հետևյալ հրատարակություններում՝ Ռ. Պ[ատկանեան] «Նշխարք մատենագրութեան Հայոց», Ս. Պետերբուրգ, 1884 թ., 53–58 էջերում «Մինասայ Թոխատեցւոյ ողբ ի վերայ Հայոց աշխարհին Ուլախայ» խորագրով։ Բանաստեղծությունը ոկզբից թերի է։ Գ. Գովրիկյանը բանաստեղծության ամբողջական բնագիրը հրատարակել է «Հանդէս Ամսօրեայ» ամսագրում, 1888 թ., էջ 39, 62. «Ողբ ի վերայ Օլախաց երկրի հայերուն ի Թաւխաթցի Մինաս սարկաւագէ ասացեալ» խորագրով։ Մի փոքր ավելի ուշ՝ 1896 թ. Ալիշանը սույն բանաստեղծությունը զետեղել է «Կամենից» աշխատության 20—27 էջերում։

[2] Զամչեան. «Պատմութիւն Հայոց», հատոր Գ, էջ 516։

[3] Պըշըքլեան, «Մ Թոխաթեցւոյ ողբ ի վերայ Հայոց աշխարհին Ուլախաց» («Հանդէս Ամսօրեայ», 1895 թ., էջ 100)։

[4] Վենետիկ, 1896, էջ 18։

նման Յակովկայ արար։ Եւ Պալքոյ անուն ումեմն զՀակատն քերթեցին, և այլ պէսպէս կտտամահ տպանին և զբաղումս։ Դահիճք նոցա քահանայք էին Ուլախաց աղգէ, և գլխաւորք սոցա զեպիսկոպոսն իւրեանց, հրամանաւ պիղծ թագաւորին Ստեփանի. յորմէ էառ... (պակասէ)»։[1]

Շատ հավանական է, որ Չամչյանի օգտագործած հիշատակարանը վերոհիշյալ վկայությունը լինի։[2]

1551 թվականի Վալախիայի հայերի հալածանքի և այլ իրադարձությունների մասին բավական ընդարձակ վկայության ենք հանդիպում № 7584 ժողովածուի 684—686 էջերում գտնվող «Նախ վասն խօնթքարի և շահին և զկնի պղծին Ստեփանի Օլախաց թագաւորի և շարեաց նորին որ առ ազգս Հայոց» խորագիրը կրող ժամանակագրության մեջ։ Սրա միայն երկրորդ մասը պահվել է նաև № 3079 ժողովածուի 254ա էջում, որի տարընթերցվածքները բերում ենք հրատարակվող բնագրի տողատակում։

Ժամանակագրությունը սկսվում է 1546 թվականի շահ Թահմազի ելքոր՝ Ալխասի Կ. Պոլիս փախչելու, փախուստին հաջորդող պարսկա-օսմանական կռիվների վկայությամբ և վերջանում 1556 թվականի սուլթան Սուլեյման 1-ի հետ կապված մի դեպքի հիշատակությամբ։ Այսպիսով, ժամանակագրությունը ընդգրկում է 10 տարվա՝ 1546—1556 թ. թ. անցուդարձ, որի մեծագույն մասը նվիրված է 1551 թվականի Վալախիայի հայերի հալածանքին։

Թե ո՞վ է եղել առաջարկվող ժամանակագրության հեղինակը, հնարավոր չէ պարզել, սակայն պարզ է, որ այն կազմել է դեպքերին ժամանակակից մի անձնավորություն։ Այդ երևում է ժամանակագրության վերջին հատվածից, որտեղ կարդում ենք. «Ի ժամանակիս այսմիկ, որ է թիւ Հայոց Ռե (=1556) կամի խօնդքարն և ի միտս եղեալ է ձեռն արկանել զքրիստոնէից թագաւորքն, զոր անյաջող եղեցի»։

Մեզ զբաղեցնող ժամանակագրության 1551 թվականի Վալախիայի հայերի հալածանքին վերաբերող հատվածը և նույն դեպքերի մասին Քեոմուրճյանի օգտագործած վկայությունը, որը մեջ է բերել Ալիշանը «Կամենից» աշխատության 18-րդ և 19-րդ էջերում, համեմատելիս կարելի է նկատել երկու բնագրերի համապատասխան հատվածների նույնությունը։ Այս բանը մեզ ենթադրել է տալիս, թե Կ. Քեոմուրճյանի օգտագործած վերոհիշյալ բնագիրը հավանորեն ծագել է ստորև հրապարակվող բնագրից։ Սակայն հնարավոր է նաև այն, որ վերոհիշյալ երկու հատվածները ժամանակակից տարբեր հեղինակների են պատկանում, բայց մեզ հավանական թվում է առաջինը։

Այս ժամանակագրության մի շարք տեղեկությունները թեև հայտնի են Մինաս Թորխաթեցու միջոցով, ինչպես եկեղեցիների ավերում, թալան, գրքերի այրում, խոշտանգումներ, սպանություններ և այլն, սակայն հանդիպում են նաև այնպիսի փաստեր, որոնք կարող են նոր լույս սփռել հալածանքի պատճառների լուսաբանության վրա։ Որոշ վկայություններ էլ կամ շեղվում են Մինաս Թորխաթեցու տեղեկություններից, կամ չեն նշված նրա կողմից։

---

[1] Կամենից, Վենետիկ, 1896, էջ 18—19։

[2] Վերոհիշյալ հալածանքների մասին որոշ ակնարկություններ պահել են նաև ռումինական տարեգիրներ Գ. Ուրեչյան և Ն. Քոսդեն («Հանդէս Ամսօրեայ», 1895 թ., էջ 100—101)։

Պատմագրության մեջ վերոհիշյալ հալածանքի պատճառների մասին գոյություն ունեն հակասական կարծիքներ։[1]

Առաջարկվող ժամանակագրության որոշ տվյալների ուշադիր քննումը ցույց է տալիս, որ վերոհիշյալ հալածանքի պատճառներն ավելի խոր արմատներ ունէին և որ դավանափոխության հարցը խնդրի արտաքին կողմն է միայն։ Ժամանակագրության առանձին նկարագրությունները և Մինաս Թոխաթեցու հեռավոր ակնարկները ի մի բերելով, կարելի է հանգել այն եզրակացության, որ հայերի հալածելու գլխավոր պատճառը ոչ թե հայերի դավանափոխության հարցն էր, այլ նրանց տնտեսապես թուլացնելու, ունեցվածքը զավթելու և իրավական ու քաղաքական որոշ արտոնությունները սահմանափակելու հարցն էր։

Մասամբ այս տեսանկյունով մեկնաբանելու երկչոտ փորձեր է կատարել պատմաբան Դեմետրիոս Տանը, հայերի հալածանքի պատճառների մասին դրելով. «Դարձընելու (խոսքը վերաբերում է հայերի դավանափոխությանը— Վ. Հ.) այս փորձերու պատճառն էր այն յեղափոխական ժամանակին հոգին, կամ թերևս ճշտագոյնս, Ստեփան իշխանին անագորոյն բնութիւնն կամ ճարուստ հայերու դրամը կորզելու դիտավորութիւնն»։ (Ընդգծումը մերն է— Վ. Հ.)։

Ինչպես տեսնում ենք, հեղինակը հայերի հալածանքի պատճառը կապում է երեք հնարավոր հանգամանքների հետ։ Մինչդեռ երբ նկատի ենք ունենում Վալախիայի հայերի վիճակը և նրանց խաղացած դերը Վալախիայի տնտեսական կյանքում մի կողմից և առաջարկվող ժամանակագրության տեղեկություններն ու Մինաս Թոխաթեցու որոշ ակնարկները մյուս կողմից, ապա դժվար չի լինի հետևեցնել, որ հայերի հալածանքի բուն պատճառը պետք է փնտրել տնտեսական, որոշ առումով նաև քաղաքական, հողի վրա։

Դ. Տանը բազմաթիվ փաստերով ցույց է տալիս, որ հայ գաղթականները Վալախիայում նշանակալի արտոնություններ ունենալու շնորհիվ, տնտեսական իրենց գործունեությամբ կարողացել էին ահագին հարստություններ կուտակել և մեծ դեր խաղալ Վալախիայի տնտեսական կյանքում։ Նվիրատվությունների ու այլ գործարքների շնորհիվ հայկական եկեղեցիները նույնպես մեծ հարստությունների տեր էին դարձել։[3] Այս հանգամանքները հասկանալի են

---

[1] Մինաս Թոխաթեցու կարծիքով դրանց պատճառը հայերի աստվածային պատվիրանի մեջ թերանալն է (58—60-րդ քառյակները)։ Ռումինական տարեգիրներ Ուրեխյան և Քոգեն, նշում են դավանափոխության նկատառումները («Հանդէս Ամսօրեայ», 1895 թ. էջ 100—101)։ Ռումինական խոշոր պատմաբան Հաշդեուն սկզբում կարծում էր, թե հայերին հալածող Սա. Ռարեսը ամուսնացած լինելով կաթոլիկ դարձած, մոլեռանդ և հայատյաց մի հայ կնոջ՝ Սերբեկայի հետ, վերջինիս դրդմամբ էլ նա դիմել է այդ հալածանքին, որը «...կրնայ մեկնուիլ հոգեբանապէս եթէ ոչ իշխանին անմտութեամբն ու յիմարութեամբ, գոնեայ յունադաւանութեան դարձած կնոջ մը ժոլեռանգութեամբ» («Հանդէս Ամսօրեայ», 1895, էջ 101)։ Սակայն, հետագայում Հաշդեուն երբ պարզում է, որ ինքը մի փոքր թյուրիմացության մեջ է, այսինքն՝ վերոհիշյալ Սերբեկայի ամուսինն եղել է ոչ թե հայերին հալածող Ստեփան Ռարեսը, Պետրոս Ռարեսի որդին, այլ վերջինիս՝ Պետրոս Ռարեսի եղբայր Աստվածատուր Միքայելու որդի Ստեփան կրտսերը, նա փոխում է իր նախորդ կարծիքը և նոր եզրակացության հանդում. «...աւելի ծանրակշիռ է քաղաքական տեսակետով՝ այն մեծ առաւելութիւնը, զոր մեր նախնիք չէին դանդաղած շնորհել այս Կաւկասի դաւասներէն եկած աշխատասէր հիւրերուն...» («Հ. Ամսօրեայ», 1895 թ. էջ 134)։

[2] Դ. Տան, «Արևելեան Հայք ի Պուքովինա», Վիեննա, 1891, էջ 27—29։ Հմմտ. Մ. Թոխաթեցու ոդրի 4-րդ, 5-րդ և 70-րդ քառյակները։

[3] Նույն տեղ, էջ 14—17։

դարձնում, թե ինչու ռումինական իշխողները, ձգտել են հայերի դավանափոխության պատրվակի տակ հարուստ հայերի և եկեղեցիների ունեցվածքը բռնագրավելով, թուլացնել տնտեսապես, դրանով իսկ սահմանափակել նրանց տնտեսական ազատ գործունեությունը։ Հենց այն փաստը, որ հայերի դավանափոխությունից հետո նրանց, հատկապես առևտրական կապիտալի ներկայացուցիչներին, շարունակել են կողոպտել և հալածել, ցույց է տալիս, որ 1551 թվականի հալածանքի պատճառները դուրս են եկել կրոնական ոլորտից։ Այս կապակցությամբ թանկարժեք վկայություն է տալիս առաջարկվող ժամանակագրությունը, «Ապա գիտացիր եղբայր, որ յոյնք յԼա դարձուցանելոյ զհայք ի դաւանութիւն իւրեանց, չար հրաման հանին ընդ ամենայն երկիր, որք էին ընդ իշխանութեամբ իւրեանց, ըմբռնել զվաճառականս ամենայն զեայ և զտանիկսն. և սպանին անթիւ վաճառականք ի Հայոց և ի Տաճկաց, որոց մինն ի բազմացն էր մեծ վաճառականն Կարապետ Կաֆայեցին և այլոց ոչ գոյր թիւ» (ընդգծումը մերն է—Վ. Հ.)։

Ինչպես տեսնում ենք, դավանափոխությունը հարցը չի լուծել և, որ կարևորն է, այժմ բռնագրավում են ոչ միայն հայ, այլև թուրք վաճառականների ունեցվածքը։ Հարվածը առաջին հերթին իջել է ունևորների և եկեղեցու վրա։ Այ դմասին Մինաս Թոխաթեցին գրում է.

«Խիստ փառաւոր հայեր կային.
Հանկարծ փորձանք եկավ նոցին»։ (15-րդ քառյակ)։

Եվ եթե եկեղեցին նույնպես կրել է առաջին հարվածը, այդ բացատրվում է ոչ թե հայերի դավանանքի ոգեշնչող կենտրոն հանդիսանալու պատճառով, այլ նրանով, որ եկեղեցին ևս մեծ հարստություններ է ունեցել և ձգտել են այն ևս բռնագրավել։ Եվ իսկապես, եթե հարցը վերաբերվեր հայերի դավանափոխությանը, ապա այդ հրամանը պետք է հայերին հայտնվեր նախքան հալածանքները, որպեսզի մերժելու դեպքում նոր միայն սկսվեր հալածանքը. մինչդեռ իրականում հայերին առաջարկում են դավանափոխ լինել կողոպուտը, բռնագրավումը, խոշտանգումները և սպանությունները չորս օր կատարելուց հետո։ Այդ մասին հետաքրքիր վկայություն է տալիս Մինաս Թոխաթեցին իր «Ողբի» մեջ.

«Ի լուսանալ չորեքշաբթին՝ (պետք է նկատի ունենալ, որ հալածանքը սկսվել է 1551 թ. օգոստոսի 16-ին կիրակի օրը)...

. . . . . .

Այն վոյվոտայն պեղծ Շտեֆան
Որ ինքն եղաւ դիւաց դարան,
Ասաց. հայեր դուք միաբան,
Ունկրն դրրեք ամենեքեան.

Այդ ի՞նչ հաւատք որ կու պաշտէք,
Ամէն ազդէ դուք ի դուրս էք,
Որ դուք ամէնքրդ մոլար էք,
Եկէք ի մեր հաւատն մտէք»։
(27-րդ, 37-րդ և 38-րդ քառյակները)։

Եկեղեցիների ոսկեղենի, արծաթեղենի և այլ իրերի կողոպուտի մասին ժամանակագրության մեջ կարդում ենք. «Զսպասք և զինչք զխաչ և զսկիհքն, զի զոսկին և զարծաթն առին և ձիու թամբ և նալ շինեցին և միմեանց օժիտս առաքէին, զշուրջառն և զուրարն և զշապիքն և զայլ ամէնն անկողին և տօշակ շինեցին»։ Իսկ Մինաս Թոխաթեցին նկարագրելով հալածանքից մի փոքր առաջ, թերևս օգոստոսի լույս 16-ի գիշերը Սուշավա բերդում տեղի ունեցած Ստեփան Ռարեսի մասնակցությամբ, քաղաքի ազդեցիկ մարդկանց և բարձր հոգևորականության խնճույքը, գրում է.

«Խորհուրդ արին իւրեանց միջին,
Զարիք բազում սերմանեցին.
Շատոց ոխ կայր իւրեանց սրտին
Սուրբ հաւատոց Լուսաւորչին» (11-րդ քառյակ)։

Ընդգծված բառերը արդյո՞ք խուլ ավնարկ չեն հայերի (հարուստների և հայկական եկեղեցու) նկատմամբ անբարեհամբույր վերաբերմունքի մասին, որը կարող էր արդյունք լինել հայերի տնտեսական եռանդուն գործունեության, նրանց ունեցած որոշ արտոնությունների։ Հետևաբար, հենց այդ էր ոխի պատճառը, որը Վալախիայի ունևոր դասակարգի մեջ կուտակել էր ատելություն դեպի հայ գաղութի ունևոր շերտերի դավանությունը, սովորությունները և կենցաղը։ Ուստի այս վերջիններս միահյուսվել են հալածանքի գլխավոր պատճառին և գերազանցապես քողարկել այն։

Ժամանակագրության որոշ տվյալները չեն հաստատում Մինաս Թոխաթեցու համապատասխան վկայությունները, ինչպես այն փաստը, որ Խաչատուր քահանան ծանր խոշտանգումներից հետո ստիպված է դավանափոխ լինել, որովհետև սպառնում էին նաև նրա զավակներին, ուստի

«Մընողական գուքն շարժեցաւ
Եւ իւր տղոց ողորմեցաւ,
Եւ ակամայ մըկըրտեցաւ
Եւ յՕլախի հաւատ մըտաւ»,

գրում է Մինաս Թոխաթեցին։

Մինչդեռ ժամանակագրությունը հաստատելով Խաչատուր քահանայի կրած տառապանքները, ավելացնում է, որ նա նահատակվեց։ Ոմն Պալքոյի և Խաչատուր Կաֆայեցու սպանության, ինչպես նաև Ստեփան Ռարեսի հաջորդ Ալեքսանդրի հայերի նկատմամբ վարած մեղմ քաղաքականության մասին Մինաս Թոխաթեցին որևէ հիշատակություն չի պահել։ Այդ տեղեկություններն իմանում ենք ժամանակագրության միջոցով, ինչպես նաև պարսկա-թուրքական պատերազմներին վերաբերող վկայությունները, որոնք հետաքրքիր են նրանով, որ մի փոքր շեղվում են Զաքարիա Սարկավագի տեղեկություններից։[1] Օրինակ, Զաքարիան չի նշում Ալիասի փախուստի տարեթիվը, մինչդեռ ժամանակագրությունը սույն դեպքը դնում է ՋՂԵ (1546) թվականի տակ։ Ըստ ժամանակագրության Ալիասի հարձակումը իր եղբոր դեմ տեղի է ունեցել ոչ թե ՋՂԷ (1548) թվականին, ինչպես հաղորդում է Զաքարիան, այլ ՋՂԶ (1547) թվականին և այլն։

---

[1] Հմմտ. «Պատմագրութիւն» հատոր առաջին, էջ 10—11։ Զամչյանն Ալիասի փախուստը դնում է 1548 թվականի տակ, իսկ Սուլեյման I-ի և շահ Թահմազի կռիվները՝ 1549 թվականի տակ («Պատմութիւն Հայոց», հատոր Գ, էջ 513)։

ՆԱԽ ՎԱՍՆ ԽՈՆԹՔԱՐԻ ԵՎ ՇԱՀԻՆ ԵՎ ԶԿՆԻ ՊՂԾԻՆ ՍՏԵՓԱՆԻ ՕՂԱԽԱՑ ԹԱԳԱՒՈՐԻ ԵՎ ՁԱՐԵԱՑ ՆՈՐԻՆ ՈՐ ԱՌ ԱԶԳՍ ՀԱՅՈՑ՝ 684

Ի թվիս Հայոց ՉՂԵ (1546) փոխուցեալ շահի որդին եղբօրէն իւրմէ և գնաց ի Սամսպոլ։[2]

5 Եւ ի ՉՂԶ (1547) թվին առեալ զխոնթքեարն բազում զօրօք և գնաց ի վերայ իւր եղբօրն, շահ Թամպին. և ոչ ինչ կարաց առնել նմա, բայց զՎանա բուրգն և զԱրճէշ առեալ, և զազգս Հայոց զոմն գերեցին և զոմն զողացեալ դարձան ի Սամսպոլ։[3]

Եւ ՉՂԷ (1548)-ին եկել շահն դեռ նորա և աւերեալ ի
10 Վանա մինչև ի Եղնկան. և զորոց և հասանէին ի վերայ կոտորէին ի քրիստոնէից և ի թուրքաց։

Իսկ ի ՌԲ (1553) թվին դարձեալ խոնթքարն ի Սամսպոլու և գնաց ի Ամասիա և եսպան զաւազ որդին իւր, որ էր թագաւորեցուցեալ ի Ամասիա. ԼՌ (30000) հեծելազօրք և անցեալ
15 գնաց ի վերայ շահին և ոչ ինչ կարաց առնել, բայց հաշտեցան ընդ միմեանս և դարձաւ խոնթքարն ի Սամսպոլ։[4] Եւ ապա շահի հեծելքն շատք ի Հայոց ազգաց սպանին՝ քահանայք, եպիսկոպոսք, և վարդապետք և յաշխարհականաց անթիւ անձինս կոտորեցին։

20 Ի Ռ (1551) թվիս Հայոց անօրէն թագաւորն Ստեփան,[5] որ էր ազգաւ Օլախ, դաւանութեամբ հոռոմ և թագաւոր Սէչօվ քաղաքին և Օլախ ազգին։ Սա դարձոյց ի դաւանութիւն իւր Ռ (1000) տուն ի Հայոց ազգէն և արար զամենեսեան ընդ դաւանութեամբ հոռմին, որք էին ընդ իշխանութեամբ իւր։ Եւ որք
25 ոչ դառնային ի դաւանութիւն իւր, ի սուր սուսերի մաշէր զնոսա. և բազումք նահատակեցան, յորոց մինն ի բազմաց || էր տէր 685
Խաչատուր քահանայն, որ չարաչար տանջեցին՝ զԲ (2) աչքն հանին, զԲ (2) ձեռքն և զԲ (2) ոտքն կտրեցին, զՊալքոյ ոմն հայ ազգաւ գերեսն և զճակատն քերթեցին և սպանին։ Բայց զհալածումն քահանայից, և սարկաւագաց, և ժողովրդեան, և զաւերումն սուրբ եկեղեցեաց և զխորտակումն սուրբ խաչերաց, և զայրումն սուրբ գրոց, և հեղումն սուրբ մեռոնին, և զանարգումն սուրբ աւազանին, և զցրքումն սուրբ խորհրդոյն, և զբաժանումն սպասուց սրբութեան, և զհայհոյումն պատկերաց տէրունական և
35 որբոց նորա, և զլաց, և զհառաչ, և զաղաղակ մարց, և զճիչ տղայոց. և զսուգք ծերոց, և զսարսափ երիտասարդաց, և զզողումն կուսանաց աղջկանաց, և զթաքչումն մանկանց, և զհառաչանաց

նոցա, ով կարէ պատմել և կամ ընդ զրով արկանել։ Զսպառք
է. զինչք զխաչ և զսկիհքն, զի զոսկին և զարծաթն առին է ձիու
թամք և նալ շինեցին, և միմեանց օժիտս առաքէին, զշուր-
ջառն և զուրարն և զշապիքն է պայլ ամէնն անկողին և աշակ
5 շինեցին։ Բայց ոչ եթող աստուած յանօրին այն, որ պարծէր
յանօրէնութեան իւրում, զի ինքն աստուած եղև վրէժխնդիր
արեան անպարտ սպանելոցն և մատնեաց զչար թագաւորն Ստի-
ֆանէ ի ձեռն զօրաց իւրոց, որ չարաչար սպանին զնա և այն-
պէս՝ չարն չարեաւ կորեաւ և բարձաւ ի միջոյ ի խաւարն ար-
10 տաքին։ Եւ յարեաւ այլ թագաւոր, երկիւղած յաստուծոյ, բարե-
պաշտ և խաղաղարար առ ամենեսեան, Աղէքսանդր անուն, զոր
ետ հրաման Հայոց աղղիս պահել զղաւանութիւնս Լուսաւորչին
ի վերայ հրաման առաքելոց և մարգարէից, և զամենայն կապեալս
արձակեաց, և զփախուցեալսն և զաքսորեալսն զարձոյց, և զնե-
15 ղեալսն զիւրացոյց։ Եւ հրաման ետ շինել զեկեղեցիս և զվանո-
բայսն. և սպասք սրբութեան շնորհեաց արքունուստ սկոյ և
արծաթոյ և ի պատկերացն։ Եւ հրաման եա Հայոց, թէ ուր գտա-
նիցէք զսպասք եկեղեցեաց ձերոց բանիւ և հրամանաւ իմով
առէք աներկիւղ և զղաւանութիւն ձեր պինա պահեցէք, բայց
20 զդոյշ լերուք, ասէր թագաւորն, ի չար աղդէն Օլխաց, որ կու
մախան ընդդէմ ձեր։ Ապա գիտացիր եղբայր, որ յոյնք լետ
դարցուցանելոյ զհայք ի զաւանութիւն իւրեանց չար հրաման
հանին ընդ ամենայն երկիր, որք էին ընդ իշխանութեամբ
իւրեանց, ըմբռնել զվաճառականս ամենայն զհայ և զտաճիկն
25 և սպանին անթիւ վաճառականք ի Հայոց և ի Տաճկաց, սրոց
մինն ի բազմացն էր մեծ վաճառականն Կարապետ Կաֆայեցին
և այլոց ոչ գոյր թիւ։ Բայց դյունաց աղգն, որք էին վաճառա-
կան ոչ սպանանէին, այլ ընչիւք իւրեանց արձակէր զնոսա, գնալ
ի տունս իւրեանց։ Բայց նման Ցուլիանոսի մանկամեռ. կարճ
30 օրաց եղեալ, սատակեցաւ ի զօրաց իւրոց, չար թագաւորն այն՝
պիղծ Ստէֆան, ըստ հրամանի տեառն թէ «զչարն չարեաւ ‖ 686
կորուսցէ և զայգին տացէ այլոց մշակաց»։ Սա՝ պիղծս Ստե-
ֆաննոս ոչ միայն զհայս այլև զՖռանկաց աղգն ևս գարձոյց ի
զաւանութիւն իւր։ Յետ Զ (6) ամաց և զկնի Ա[1]ամ և Ա[1]ամիս
35 թագաւորեաց չարն և անօրէնն։ Եւ ի թագաւորեալն Աղեքսանդ-
րու Օլխաց թագաւորին և սոքա ևս դարձան ի զաւանութիւն
իւրեանց, հրամանաւ բարեպաշտ թագաւորին Աղէքսանդրու։ Եւ
զայս գիտացիր եղբայր, որ գահիճ պղծին չքահանայքն էին
Օլխաց աղգէն և գլխաւորք սոցա չեպիսկոպոսն իւրեանց ընդ

---

9 ի (խաւարն) չիք։ 11 ամենեսեանն։ 13 վերայ չիք։ 18 հրամանով։ 20 զգուշ։ 26 Ֆաֆայեցին։ 27 այլոցն որոց, վաճառականք։ 28 սպանէին։ 29 իւրեանց չիք։ 31 պիղծն, թէ չիք։ 34 մէկ փխ. Ա, ամ չիք։ 35 Աղէկսանդրու։ 38 պիղծին։

Թագաւորին համահրամանն յորդորօղ տարեացս։ Ի ժամանակիս այսմիկ, որ է Թիվ Հայոց ՌԵ (1556) կամի խօնգքարն և ի միտս եղեալ է ձեռն արկանել զքրիստոնէից զԹագաւորօքն, զոր անյայղող եղիցի։

---

2 հիւնքարն։ 3 արկել։ 3—4 յայղող* փխ. անյայղող։

* Ճիշտ է «անյայղող» ձևը, որովհետև Ռ 3079 ձեռագրի մեջ «յայղող» բառից առաջ մինչև «զոր» բառը կա դատարկ տարածութիւն, այդ հանգամանքը ցույց է տալիս, որ ընդօրինակողը «ան» նախդիրը հավանաբար չի կարողացել կարդալ և տեղը բաց է Թողել, գրելով շարունակությունը՝ «յայղող» բառը։

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Բնագրում վերնագիրը գրված է կարմիր թանաքով։

2. Հմմտ. «Զաքարեայ Սարկաւագի Պատմագրութիւն», հ. Ա, Վաղարշապատ, 1870, էջ 10—11։

3. Սուլթան Սուլեյմանի և շահ Թահմազի սույն կոիվների մասին տես նաև Петрушевский, „Азербайджан в XVI—XVII веках", Сборник статей. стр. 267:

4. Հմմտ. X ժամանակագրություն «Կամենից», էջ 19։

5. Խոսքը վերաբերում է Վալախիայի իշխան Ստեփան Դարէշ 7-րդին, որն իշխել է շատ կարճ՝ 1551—1552 թ. թ.։ Նա զոհ դարձավ իշխանների ապստամբության ու դավադրությամբ սպանվեց 1552 թ. (հմմտ. Դեմետրիոս Տանի «Արևելյան Հայք ի Պուքովինա», Վիեննա, 1891, էջ 20—21)։

6. Մատ. ԻԱ, 41։

IX

ԱՆԱՆՈՒՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ (XVI Դ.?)

Մատենադարանի №№ 1737[1] *(Ա տարբերակ), 3695*[2] *(Բ տարբերակ) ժողովածուներում գտնվում են միևնույն ժամանակագրության երկու տարբերակները։ Ա-ն, որ ունի «Դուրս գալն թաթարաց» խորագիրը, Բ տարբերակը այն չունի։*

Ժամանակագրության երկու տարբերակները եթե սկսվում են միևնույն դեպքի՝ 1221 թ. դեպի Հայաստան մոնղոլների կատարած արշավանքի հիշատակությամբ, ապա վերջանում են տարբեր եղելությունների վկայությամբ։ Այս փաստը մեզ ենթադրել է տալիս, որ նրանք հայտնի տահմանից հետո շարունակվել են տարբեր անձնավորությունների կողմից։ Եվ իսկապես, ժամանակագրության երկու տարբերակների համեմատությունը ցույց տվեց, որ եթե մի քանի տեղեկությունների մեջ նկատի չունենանք նրանց աննշան շեղումները և մանրամասնությունները, ապա երկու տարբերակները սկզբից մինչև 1549 թվի վկայությունը ներառյալ, ընդհանուր առմամբ զուգահեռ դնում են և ծածկում միմյանց։ Այնուհետև երկու տարբերակներում էլ շարունակությունները զանազանվում են։ Ճիշտ է, այստեղ մի քանի վկայություններ կրկնվում են, սակայն այդ դեպքերը երկու տարբերակում էլ դրված են տարբեր տարեթվերի ներքո, տարբեր ծավալով և մանրամասնությամբ։ Վերոհիշյալ փաստերը մեզ ենթադրել են տալիս, որ ժամանակագրության սկզբնական բնագիրն ընդգրկել է 1221 թվից մինչև 1549 թվականի՝ շուրջ 330 տարվա եղելությունների համառոտ տեղեկություններ։ Իսկ մնացած մասն ավելացրել են ուրիշները։ Եթե ճիշտ է վերոհիշյալ մեր ենթադրությունը, նշանակում է ժամանակագրության սկզբնական բնագրի հեղինակը XVI դարի առաջին կեսի անձնավորություն է։

Սակայն զարմանալին այն է, որ հեղինակն իր մասին ոչ միայն հիշատակություն չի թողել, այլև ոչ մի տեղ չի ակնարկել, թե ինքը որևէ եղելության ժամանակակից է։ Այդ և ժամանակագրության համառոտ լինելու պատճառով հնարավոր չէ նրա հեղինակի կամ աղբյուրների մասին որևէ բան ասել։

Ժամանակագրության տեղեկությունների մեջ կան այնպիսիները, որոնք բացահայտ սխալ են, ինչպես Հուլաուի կողմից Բաղդադի գրավման, այնպես էլ Արղունի, Քեղաթուի, Բաթուի և այլոց գահակալության տեղեկությունները և այլն։

Ներկա հրատարակության համար հիմք ընդունել ենք Բ տարբերակը, իսկ Ա-ի տարընթերցվածները նշել ենք տողատակ։

---

[1] *էջ 185ա—186բ։*

[2] *էջ 6բ—9բ։*

Բ. Մատենադարանի №№ 7040,[1] 8509- և 1127[3] ժողովածուներում գտնվում է միևնույն ժամանակագրության երեք տարբերակները։ Առաջարկվող ժամանակագրության առաջին մասը, սկզբից մինչև մոնղոլների կողմից Անիի և Լոռիի գրավման վկայությունը թողնում է I ժամանակագրության համառոտման տպավորությունը, իսկ երկրորդ մասը համապատասխանում է վերևում նշված ժամանակագրության առաջին՝ Ա. մասին։ Այսպիսով, չնայած առաջարկվող ժամանակագրությունը կարծեք թե կրկնում է I և IX (Ա) ժամանակագրության տեղեկությունները, սակայն նրա բնագիրը չտարալուծելու, ավելորդ բարդություններ ու թյուրիմացություններ չառաջացնելու նկատառումներով, որոշեցինք ներկա հրատարակության մեջ այն ներկայացնել ամբողջական, ինչպես բնադրում է։

Ենթադրությունների մեջ չդեգերելու համար, թե սույն ժամանակագրությունն ինչպե՞ս կարող էր առաջ դալ, կամ նրա հեղինակն ի՞նչ աղբյուրներ է օգտագործել, բավարարվենք միայն մի քանի տեղեկություններով։ Վերջինիս խորագիրը՝ «Թվականք առ հասարակ մինչև առ մեզ», պահվել է միայն Ա և Բ բնագրերում։[4] Երեք տարբերակում էլ պատմական մասին նախորդում է, նահապետների ու նրանց սերունդների, տիեզերական ժողովների և վերջիններիս միջև ընկած տարիների ու այլ և այլ դեպքերի հաջորդական թվարկումը և այլն։ Ա և Բ տարբերակների այս մասը ծածկում են իրար, իսկ Գ տարբերակում այն բավական ընդարձակ է։ Հնարավոր է, որ ժամանակագրության նախասկզբնական օրինակում նահապետներին և այլոց վերաբերող տրադիցիոն պատմությունը եղել է այնպես, ինչպես Ա և Բ տարբերակներում, իսկ հետագայում ընդօրինակողներից որևէ մեկը չհավանելով դրան, սկզբնական մասն ինքն է կազմել՝ ավելի ընդարձակ ձևով։ Սակայն հնարավոր է և հակառակը՝ Ա և Բ տարբերակների վերոհիշյալ մասը համառոտվել է Գ տարբերակի որևէ բնագրից։

Երեք տարբերակներում էլ պատմական մասը սկզբից ծածկում են միմյանց, մինչդեռ նրանք միևնույն տեղեկություններով չեն վերջանում։ Ա տարբերակը վերջանում է 1418 թվականին, Բ տարբերակը՝ 1010 թվականին, իսկ Գ տարբերակը՝ 1302 թվականին վերաբերող վկայություններով։ Այստեղից դժվար չէ եզրակացնել, որ Բ և Գ տարբերակներում ժամանակագրությունը մնացել է թերի, որպիսի հանգամանքն ակնառու կերպով երևում է Գ տարբերակի բնագրից։ Սակայն կարծում ենք, որ թերի է նաև Ա տարբերակը։ Հենց այն հանգամանքը, որ հեղինակը խորագրում խոստանում է տեղեկությունները հասցնել «մինչև առ մեզ»՝ իր ժամանակաշրջանը մի կողմից և IX ժամանակագրության Ա մասն էլ այդ դեպքից հետո շարունակվում է մյուս կողմից, ցույց է տալիս մեր ենթադրության հավանականությունը։

Հեղինակի օգտագործած սկզբնաղբյուրներից որոշակիորեն կարելի է նշել միայն Աստվածաշունչը. նա հենց այդպես էլ գրում է. «որոց (Ադամի և հաջորդների տարիների քանակը— Վ. Հ.) շարադրութիւնք լինի ըստ եւթանասնիցն ամք՝ ՐՃՂԸ (5198)»։ Ներկա հրատարակության մեջ առաջարկվող ժամանակագրության Ա տարբերակը դարձրել ենք հիմք, իսկ Բ և Գ տարբերակների տարբերությունները տվել ենք տողատակ։

---

[1] էջ 287ա—290ա, Ա տարբերակ։

[2] էջ 121ա—123ա, Բ տարբերակ։

[3] էջ 40ա—44բ, Գ տարբերակ։

[4] Գ տարբերակում խորագրի տեղը բաց է թողնված։

IX

Ա

ԳՈՒՐՄ ԳԱԼՆ ԹԱԹԱՐԱՑ[1]

Ի ՌՀ (1221) թուականին Հայոց առաջին թաթարն երեկ աշ- 6բ
խարհէն Բուլղարա, էառ զաշխարհս Հայոց, որ Խորազմ կոչիւր։[2]
ԷՃ (1251)[3] թուին Մանկու խանն նստաւ թագաւոր։
5 ՉԳ (1254) թուին առաջին Արղունն նստաւ թագաւոր։[4]
ՉԷ (1258) թվին Հուլաւ[ու] խանն նստաւ։[5]
ՉԺ (1261) թվին և զԲազդատ աւերեաց։[6]
ՉԺԱ (1262) թվին Դուլ խանն նստաւ։[7]
ՉԺԴ (1265) թվին Արուղա խանն նստաւ։[8]
10 ՉԺԶ (1267) թվին Արղուն խանն նստաւ, որ Ճալալ պէկն սպանաւ ի Ղազվինն։[9]
ՉԼԳ (1284) թվին Թեղա խանն նստաւ։[10]
ՉԼԱ (1282) թվին Ահմատ խանն նստաւ։[11]
ՉԼԴ (1285) թվին Բահուդին խանն նստաւ։[12]
15 ՉԽԶ (1297) թվին Շամ Ղազա[ն] խանն նստաւ։[13]
ՉՄԲ (1303) թվին Խարպանտա խանն նստաւ։[14]
ՉԿԶ (1317) թվին սուլթան Բուսայիդն նստաւ։[15]
ՉՂ (1341) թվին Սորապէկն նստաւ։[16]
ՉՂԳ (1344) թվին շիխ Հասան Բասրնին նստաւ։[17]
20 ՉՂԶ (1347) թվին Աշրափն նստաւ։[18]
ՊԸ (1359) թվին Վայիս խանն նստաւ։[19]
ՊՄԷ (1408) Զօպան խանն նստաւ։[20]
ՊԷԵ (1386) թվին Թամուր խանն նստաւ. գնաց մինչև ի 7ա
Դմիշխ և անդ արարեալ բազում կոտորած և անդի եկն ի Հայս
25 ԺԷ (17) տար[ի] եկաց։[21]
ՊՄԳ (1404) թվին Ղարա Ուսուփն երեկ և նստաւ ի Թավ-
րէզ. ԺԷ (17) տարի թագաւորեաց։[22]

2–3 Թուին Առն թաթարն երեկ աշխարհս Հայոց, որ է Խորազմն։ 4 Զ փխ. ԷՃ, Մանկուն, թագաւոր չիք։ 5 թվին, առաջին չիք, Արղուն խանն նստաւ։ 6 Հուլաւու։ 7 և չիք, Ղազատատ այրեաց։ 8 Զոհալ փխ. Ղուլ։ 9 Ճալազուլ։ 10 Արղուխան։ 10–11 որ Ճալալ պէկն սպանաւ ի Ղազվին չիք։ 12 ՉԻԴ փխ. ՉԼԳ, Թէղաթու։ 14 ՉԽԲ փխ. ՉԼԳ, Բահատին։ 15 թվին Շամ չիք, Ղազան։ 16 ՉԽԴ փխ. ՉՄԲ, Ղարարանաա։ 17 Բուսայիթն։ 18 Ճուսուֆ բէկն փխ. Սորապէկն։ 19 Հասանն, Բասրնին չիք։ 20 խան նստաւ։ 22 ՊԺԵ թվին փխ. ՊՄԷ։ 23 ՊԷԵ փխ. ՊԷՆ, Լանկ Թամուրն եկաւ փխ. Թամուր խանն նստաւ։ 21 Դամասկոս փխ. Դմիշխ, անտ։ 24–25 ամիսս ԺԷ և ապա գնաց ի Խորասան փխ. բազում կոտորած և անդի եկն ի Հայս ԺԷ տար[ի] եկաց։ 26 և չիք։ 26–27 թախտն Թավրէզ։

ՊԾԶ (1407) թվին Էղալին Մսրա երեկ Առճէշ և շինեաց գէթ կօռխանա իւր։

ՊԿէ (1418) թվին մեռաւ Ուսուփն, թագաւորեաց Իսկանդար իմրզէն։[23]

5 ՊՀ (1421) թվին Ճաղաթէն երեկ աշխարհս Հայոց։[24] Եւ Իսկանդարն փախեաւ Արզրում և զՕթմանն [սպ]ան[եաց][25] և դարձեալ ունդի եկն ի Արաղասան։

ՊՀԵ (1426) թվին Ջոնկա խանն երեկ։

ՊԶԴ (1435) թվին Շախռուխն երեկ և [Ջ]այնշէն թագաւորեաց և ինքն գնաց ճանապարհի մեռաւ։ Եւ միւս[ամին] Իսկանդարն սպանաւ որդոյ իւրոյ Շադուպանէն։[26]

10 ՊՂէ (1448) թվին Իսկանդարի որդի Նուրալվանդն եկեալ թալանեաց զԱրճէշ և գնաց ի Գեղի նսաաւ։

ՊՂԸ (1449) թվին Ջհանշէն Բաղդաս գնաց։

15 Ջէ (1458) թվին Ջհանշէն ի Հերի գնաց։[28] Հասան || Ալին 7բ
եկաւ Արճէշ։ Ղլիճ Ասլանն եկաւ զՎան գերեաց։[29]

ՋԺ (1461) թվին Զաքարիա կաթողիկոս նստաւ Էջմիածինն։ Լուսաւորչի աջն յԱղթամարա երեր խաչալամով։[32] Ի նոյն ամին Հասան Ալին Մանծկերտ շինեաց, Արճիշու եկեղեցւոյ գլուխն

20 նորոգեաց։

ՋԺԲ(1463) թվին Զաքարիա կաթողիկոսն դեղեցին՝ մեռաւ։[30]

ՋԺԴ (1465) թվին Ճաղաթէն զՓիրպուտաղն սպանէց։

ՋԺԶ (1467) թվին Ճաղաթէն սպանաւ։[31] Հասան Ալին եկաւ ի Մակու. Է (7) ամիս թագաւորեաց՝ ի նաւասարդէն մինչև ի

25 Վարդավառն։[32] Հասան պէկն սպանէց զՀասան Ալին, ինքն թագաւորեաց ի Թարվէզ Թ (9) տարի։[33]

ՋԻ (1471) թվին Հասան պէկն զԲաղէշ ու զՂլաթ էառ։

ՋԻԲ (1473) թվին եկն ի վերայ Ջիթաղին և մաղապրծուկ փախսաական եղև,[34] որ և զՍտեփաննոս վարդապետն սպանեցին

30 Մեծորա վանքն։

ՋԻԵ (1476) թվին Հասան պէկն Վրաց տուն գնաց և բազում դերիս արար, թուով ԿՌ (60000)։[35]

ՋԻԶ (1477) թվին դարձեալ գնաց Վրաց տուն || Եւ սրահեղ 8ա
եղև ի սրբոյն Գէորգա և եկեալ մեռաւ։[36] Եւ թագաւորեաց Սօլիան։ Եւ Եաղուպն գնաց ի Համիթ և եկաց անգ ժամանակ ինչ

1—2-րդ տողերը չիք։ 3 ՊԿԹ փխ. ՊԿէ, մեռաւ Ուսուփն չիք, Իսկանտարն թագաւորեաց։ 4 իմրզէն չիք։ 5 Զրզաթէն։ 6 Արզրում, և (զՕթմանն) չիք։ 7 անդի չիք. թախտն Թաւրէզ փխ. Արաղաստան։ 8 ՊՀէ փխ. ՊՀն, Ճոնկէն, խանն չիք։ 9 Շադուխն, Ջրհանշէն։ 10 ճանապարհ և, ի միւս ամին։ 11 յորդոյ յիւրմէ, ի Շահղուպաթէն։ 12 ՊՂԸ փխ. ՊՂէ, Իսկանտարի, Նուրալբանտն։ 13 գԱռճէշ, տեղին փխ. Գեղի։ 14 ՊՂԹ փխ. ՊՂԸ, ի Բաղտատու։ 15 Ջէ թվին Ջհանշէն ի Հերի գնաց չիք, և Հասան։ 16 Առճէշ և Մակու, Ասլան Ղլիճն, եկաւ չիք, Վան։ 17—21 տողերը չիք։ 22 Զրզաթէն, զՓիրպուտախն սպանեաց։ 23 և Հասան Ալին։ 24—25ի նաւասարդէն մինչև ի Վարդավառն չիք։ 25 Եւ Հասան բէկն սպանեաց, և ինքն։ 26 Թաւրէզ, Ը փխ. Թ։ 27-րդ տողը չիք։ 28 29 ՋԻԹ թվին Հասան բէկն ի վերայ Ջիթախին գնաց և մաղապուրծ եղաւ։ 29—30-րդ տողը (որ և. Մեծորա վանքն) չիք։ 31 ՋԽԸ փխ. ՋԻԸ, բէկն, ի Վրաց։ 33 ՋԻԷ փխ. ՋԻԶ, ի Վրաց, սրահար եղեալ։ 34 Գէորգայ, մեծ որդին Սուլթանն փխ. Սօլիան։ 35 ի չիք, և եկաց անգ ժամանակ ինչ չիք։

և դարձեալ եկն ի պատերազմ հետ Խոյա սուլթանին և էառ Եղուպ փաշան։[37]

ՋԼ (1481) թվին գնաց Սուլէման և Բայանտուրն ի վերայ Շամա և պատերազմեցաւ Ուրհա և առին զիշաշան։[38]

5 ՋԼԵ (1486) թվին խոճա Միրաքն սպանաւ ի Թարվէզ։[39]

ՋԼԷ (1488) թվին Սուլէման պէկն զկարմրագլուխ շիի Հայտարն էառ բազում զօրօք։ Ի նոյն ամի Սարգիս կաթողիկոսն ոչն Լուսաւորչին տարաւ առ Հէդար պէկն։

ՋԽ (1491) թվին Եղուպ փաշահ մեռաւ, ի մէջ ձմեռան.

10 և Սոփի Խալիլն Թագաւորեցոյց զԳայոանդուրն։[40]

Յաւուր ամառնամտին գնաց ի վերայ Վանա և թալանեաց. և ամիս մի նստաւ անդ. զոր լուեալ Սուլէման պէկն յարուցեալ եկն ի վերայ Համթա, էառ զթախտ նորին և նստաւ ամիս մի։[41] և ապա որդի Մադսոտին, Ռոստամ ելեալ || ի գնտանէն 8բ

15 էառ զթախտն և նստաւ Է (7) ամիս։[42]

ՋԽՁ (1497) թվին որդի Եղլուին, Ահմատ խանն ելեալ ի Հոռոմոյ էառ զՌոստամն և նստաւ Ը (8) ամիս։[43]

ՋԽԷ (1498) թվին Ալվանդն ելաւ Արճիշոյ գնաց ի Թարվէզ։[44] Գնաց Իրա սուլթան միւս Իրայ սուլթանն սպանաւ։[45]

20 ՋԾ (1501) թվին շահ Իսմայէլն էառ զՇամախի։[46]

ՋԾԱ (1502) թվին փախեաւ Ալվանդն։[47]

ՋԿԳ (1514) թվին [փազ]շէն զօրս շահին կոտորեաց և դարձեալ թագաւորեաց շահն։[48]

ՋՀԳ (1524) թվին մեռաւ շահն և թագաւորեաց շահ Դահ-

25 մազն։

ՋՂԳ (1544) թվին շահն էառ զԹփղիս և կոտորեաց։

ՋՂԴ (1545) թվին Հոմային երեկ առ շահն։

ՋՂԸ (1549) թվին մահն երեկ աշխարհս։[49]

ՌԳ (1554) թվին շահն ի Նախջըւան նստաւ։ Խոնդքարն

30 Սահաթն աւերեաց։[50] Շահն գնաց Վրաց տուն, բերդն էառ. և դարձեալ գնաց ի Ղազվին։ Որդի շահին, Իսմայէլ գնաց ի Խորասան։

ՌԳ (1554) թվին զՀաւաքսափն[51] էառ Շահվէրտի || սուլթանն 9ա

և եկն ինքն փախստական ի Դանճայ։

---

1 ի չիք, պատերազմեցաւ, սուլթանին ի Խոյ։ 1—2 գնա և նստաւ Եղուպ փաշահն։ 3—5 տողերը չիք։ 6 ՋԼԵ փխ. ՋԼԷ, Սիլէիման ըէկն, զկարմիր գլուխն։ 7 Հէտարն, սպանեցաւ փխ. էառ։ 7—8-րդ տողը (ի նոյն ամի...առ Հէդար պէկն) չիք։ 9 փատիշահն, ի մէջ ձմեռան չիք։ 10 և չիք։ Օրի փխ. Սոփի, թագաւորեաց, զԳայոանդուրն չիք։ 11—15-րդ տողերը չիք։ 16 Ուզուրլուին փխ. Եղլուին։ 16—17 Ահմատ խանն ելեալ ի Հոռոմոց էառ զՌոստամն չիք։ 17 նստաւ թախտն փխ. և նստաւ։ 18 Ալվանդ խանն նստաւ Թավրէզ փխ. Ալվանդն ելաւ Արճիշոյ գնաց ի Թարվէզ։ 19 գնաց Իրա սուլթան միւս Իրա սուլթանն սպանաւ չիք։ 20—21 Կարմիր գլուխ շահ Իսմայիլն պատերազմեցաւ ընդ Ալվանդին և փախոյց զնա և ինքն էառ զթախտն և նստաւ։ 22—23 շահ Իսմայիլն հեծեալն կոտորեաց այլև թագաւորեաց ինքն։ փխ. շէն զօրս շահին կոտորեաց և դարձեալ թագաւորեաց շահն։ 24 Շահ Իսմայիլն փխ. շահն։ 24—25 որդին շահ Թամազն. 26 ՋՂ թվին շահ Թամազն ի Վրաց տուն գնաց և աւերեաց Տփխիս և զամենայն յերկիրն և անթիւ դիրիս արար փխ. ՋՂԴ թվին շահն էառ զԹփղիս և կոտորեաց։ 27 ՋՂԴ փխ. ՋՂԴ, Հումիրոյի փատիշահն եկաւ ոտն շահ Թամազին և գնաց։ 28 խիստ մահ եղաւ։

ՌԶ (1557) թվին զԻսմայէլ միրզէն եդին ի Լազղա գալէն։ Խոնդքարին տղայն, սուլթան Պայազիթն սպանաւ։

ՌԺԶ (1567) թվին զՍիմէոն խանն ձեր[բ]ակալ արարին։[52]

ՌԺԸ (1569) թվին մարախն երեկ աշխարհս։

5 ՌԻԳ (1575) թվին շահ Թահմազն մեռաւ։[53]

ՌԻԵ (1576) թվին շահ Իսմայէլն մեռաւ։[54]

ՌԻԹ (1580) թվին Ղայթազն որ եկաւ։

ՌԻԼ (1578) թվին Լալա փաշէն զՇամախի էառ։

ՌԾԳ (1604) թվին շահ Աբասն զԹարվէզ և զԵրևան էառ։

10 ՌԾԵ (1606) թվին զԳանճայ էառ։

ՌԾԶ (1607) թվին զՇամախի էառ։

ՌԾԸ (1609) թվին շահն Ղարաղաճին զբշլամիս եղաւ։

ՌԿԴ (1615) թվին շահն զՎրաց տուն էառ։

ՌՀԱ (1622) թվին շահն զՂանտահար էառ։

15 ՌՀԳ (1624) թվին զԲազզատ էառ։

ՌՀԴ (1625) թվին զՂարչղայ խանն և Ուսուփ խանն Մովրոփն սպանէց։ Եւ ի սոյն տարի Մովրոփն ու Թամրազն եկին ի Գանճայ և աւերեալ գերեցին զերկիրն || ամենայն։[55] Եւ ի սոյն 9բ
ամին շահն զՂօրչիպաշին սարաար եղեալ, առաքեաց ի Վրաց

20 տուն։ զՂազախ խանն, Շրուանա և զՇահպանտա խանն Թարվիզու ձերպակալ արարին։

ՌՁԴ (1635) թվին սուլթան Մուրատ խոնդքարն զԵրևան էառ։[56]

ՌՁԵ (1636) թվին շահ Սաֆին եկեալ էառ բազում յազ-

25 թութեամբ։[57]

ՌՀԸ (1629) թվին շահ Սաֆին թագաւորեաց։[58]

ՌՀԷ (1628) թվին Դօուտ խանն տօնմիշ ելաւ։ Եւ զԹամրազ խանն երեր ի Գանճայ և աւերեցին զբազում տեղիս։[59]

Լալա փաշէն, որ Երևան զերեցոյց թիւն ՌԻԷ (1578) էր։

30 Փարհատ փաշէն, որ Երևան առաւ թիւն ՌԼԴ (1584) էր։

Օսման փաշէն, որ Թարվէզ առաւ թիւն ՌԼԵ (1586) էր։

Փարհատ փաշէն, որ Գանճայ առաւ թիւն ՌԼԸ (1589) էր։

Մուրատ փաշէն, որ սարտաար երեկ Թարվէզ թիւն ՌԾԸ (1609) էր։

35 Օքուզ Ահմատ փաշէն, որ սարաար երեկ Երևանա վերայ թիւն ՌԿԵ (1616) էր։

Խալիլ փաշէն, որ սարտաար երեկ Թարվէզ, թիւն ՌԿԷ (1618) էր։

ՌԿԸ (1619) թվին մորեխն եկն մինչ ի Դ (3) տարին կերաւ։

40 Ա ՏԱՐԲԵՐԱԿԻ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ՌԴ (1554) թվին խոնդկարն երեկ ի վերայ շահ Թամազին և նստաւ ի Նախջվան և զՍահաթն || աւերեաց և բազում 186ա
գիրիս արար։[60]

ՌԸ (1559) թվին սուլթանն Պայազիթն երեկ ի շահ Թամազի մօտն։

ՌԺ (1561) թվին խոնդկարն մարդ յղղարկեց Պայազիթն սպանիլ երետ։

ՌԺԵ (1566) թվին խան Ահմատ փաշէն բռնեց Կիլան առաւ։

ՌԺԸ (1569) թվին Լովասափի որդին՝ Սիմոն խանն բռնել
5 իրետ, տարաւ իւր ոտքն։

ՌԻԱ (1572) թվին շահ Թահմազն Դեղարքունու. ծովն քանտել ետուր։

ՌԻԶ (1577) թվին շահ Թահմազն մեռաւ։ Շահ Իսմայիլն թագաւորեաց Զ (6) ամիս,[61] Եւ ղկնի թագաւորեաց շահ Խու-
10 տաբանտին։

ՌԼԵ (1586) թվին մեռաւ Խուտաբանտին.[61] և թագաւորեաց շահ Ապազն։

ՌԾԲ (1603) թվին շահ Ապ[ազ]ն Երևան առաւ։

ՌԾԴ (1605) թվին Դանջա առաւ։

15 ՌԿԳ (1614) թվին գնաց Վրաց տուն աւար էառ, սուրղուն արաւ, տարաւ Փահրապատ և զայլսն գերի արար անթիւ։

ՌԾԳ (1604) թվին Զղալոզլին երեկ Երէվանայ վերայ. շահ Ապազն Սհաթն քշեց, Զուղա քշեց, տարաւ ի Սպահան։

ՌԿԶ (1617) թվին Օգուզ Ահմատ փաշէն երեկ Երէվանայ
20 վերայ անթիւ զօրօք։ Շահ Ապազն Վրաց տուն գնաց նոյն տարին. անտի եկն Ակոիճէն եայլամիշ ելաւ։ Օգուզ Ահմատ փաշէն առանց պատերազմի դարձաւ յետս։

ՌՀԲ (1623) ամին մահ եկաւ խիստ սաստիկ։

ՌՀԴ (1625) թվին Մովրաւն զօնմիշ ելաւ. շահէն. խաներն
25 կոտորեց. Ղարապազն գերավարեց։

ՌՀԵ (1626) թվին Ղօրչիպաշին երեկ Վրաց տուն քանտեց, կոտորեց։ Մովրոնն փախաւ գնաց Օսմանլուն։

ՌՀԷ (1628) թվին շահ Ապազն մեռաւ և թագաւորեաց շահ Սաֆին։

30 ՌՁԱ (1632) թվին Դաւութ խանն զօնմիշ ելաւ գնաց, Թամ-
բազի մօտ, Ղաճարի պարնէքն || կոտորեաց. Թամբազն առաւ երեկ 186բ
Դանճա թալանէց։

ՌՁԲ (1633) թվին Ըռըստում խանն իրեկ Վրաց տուն քանտեց։ Դաւութ խանն փախաւ գնաց խոնթկարի մօտն։

35 ՌՁԳ (1634) թվին սաստիկ մահ՝ եկաւ։

ՌՁԴ (1635) թվին խոնդկարն սուլթան Մուրատն անհուն զօրօք եկն ի վերայ Էրէվանայ։ Գ (3) օրն առաւ գրերթն[62] և գնաց մինչ ի Թավրէզ. Բաղատատ առաւ և մեռաւ։

ՌՁԵ (1636) թվին շահ Սէֆին եկեալ էառ գրերթն բռնու-
40 թեամբ ապա բազումք ի զօրաց իւրեանց կոտորեցան։

ՌՂԱ (1642) թվին մեռաւ շահ Սաֆին և թագաւորեաց որդին, փոքրն՝ շահ Ապազն և սա արար խաղաղութեամբ թագաւորութիւն Իե (25) ամ։

ՌՃԺԵ (1666) թվին մեռաւ շահ Ապազն և թագաւորեաց
45 որդի նորա շահ Սուլէմանն ամռան եղանակին, սուրբ Աստուածածնին։[63]

Թվին ՌՃԽԵ (1696) շահ Սուլէմանն մեռաւ։[64]
ՌՃԽԵ (1696)-ուն շահ սուլթան Հուսէինն թագաւորեաց։
ՌՃԽԶ (1697) արեգակն իաւարեցաւ։

Բ

ԹՎԱԿԱՆՔ ԱՌ ՀԱՍԱՐԱԿ ՄԻՆՉԵՎ ԱՒ ՄԵՋ[1]

5 Ադամա մինչև ի ջրհեղեղն՝ ամք ՍՄԽԲ (2242)։ 287ա
Ջրհեղեղէն ի յաշտարակն՝ ամք ՇԻԵ (525)։
Յաշտարակէն ի Յաբրահամ՝ ամք ՆԺԷ (417)։
Յաբրահամէն մինչև ի Մովսէս յելսն յԵգիպտոսէ՝ ամք ՇԵ (505)։
10 Յելիցն մինչև ի Սողոմոն յառաջին շինուած տաճարին՝ ամք ՆՁ (480)։
Յառաջին շինուածոյն մինչև ի Զօրաբաբելի յերկրորդ շինումն՝ ամ[ք] ՇԺԱ (511)։
Եւ անտի մինչև ի ծնունդն Քրիստոսի՝ ամք ‖ ՇԺԸ (518). 287բ
15 որոց շարադրութիւնք լինի ըստ եւթանասնիցն՝ ամք ՐՃՂԸ (5198)։
Ի Յառաքելոյն Թադէոսի մինչև ի սուրբն Գրիգոր՝ ամք ՅԺԲ (312)։
Զամս ծնընդեանն Քրիստոսի այսպէս արա՝ կալ ՇՌԳ (553)
20 զհայ Թվականն ի վերայ բեր և այն է։
Զամս Լուսաւորչին այսպէս արա՝ կալ ՄԽԱ (241) զհայ Թվական[ն] ի վերայ բեր և այն է[2]։
Ի սուրբ Գրիգորէ ի Սահակ Պարթևն՝ ամք ՃԸ (108)։
[Ի] Գրիգորէ [ի հայ] Թվականն՝ ամք ՄԾԲ (252)։
25 Ի Գրիգորէ մինչև ի տէր Մովսէսն ԻԴ (24) կաթուղիկոս է։
Ի սորա Ժ (10) ամին եղաւ Թվականն Հայոց ի ձեռն Անանիայ Շիրակացոյն մեծի իմաստասիրի։
Ի ծնընդենէն Քրիստոսի մինչև ի ժողովն Նիկիայ՝ ամք ՅԻԲ (322)։
30 Անդի մինչև ի Կոստանդնուպօլսին՝ ամք ՀԳ (73)։
Անդի ի ժողովն Եփեսոսի՝ ա[մք] Ծ (50)։
Անդի մինչև ի պիղծ ժողովն Քաղ ‖ քեդոնի՝ ամք ԻԷ (27). 288ա
Անդի մինչև ի ժողովն Դվնայ ի Հայք՝ ամք (ԼԶ)։
Անդի ի ժողովն Էջմիածին Ղ (90) ամ էր, որոշեցին զՅոհան.
35 Անդի կորացան, որ Հայոց Թվականին ՀԳ (624) ի բաց կացին Վրացիքն ի միաբանութենէ Հայոց. ի ձեռն Կիւրոնի [և] Գտբրիէլի Վրաց առաջնորդի։

6 Բ ի Ջրհեղեղէն, ՇԻԷ փխ. ՇԻԵ։ 7 Բ յԱբրահամ։ 8 Բ յԱբրահամու, յելսն Մովսէսի, ՇԷ փխ. ՇԵ։ 10 Բ Յելիցն Մովսէսի, Սողոմոնի։ 12 Բ ի Զօրաբաբելի չիք. երկ[ր]որդ։ 15 Բ շարադրութիւնն, եօթանասնիցն։ 17 Բ մինչև չիք։ 19 Բ ծընընդեան, արայ։ 21 Բ արայ։ 22 Բ թուականն։ 23 Բ Գրիգորէն։ 24 Բ ի Գրիգորէ մինչև, Գ թվական։ 25 Բ կաթուղիկոսն։ 26 Գ թվական։ 27 Բ իմաստասիրին, Գ իմաստնասիրի մեծի։ 30 ԲԳ Անտի, Բ Կոստանդնուպօլսի ժողովն։ 31 Գ մինչև ի ժողովն Յեփեսոսի։ 32 ԲԳ Անտի, Գ Քաղկեդոնի։ 33 ԲԳ Անտի, Գ Դովնայ։ 34 ԲԳ Անտի մինչև ի ժողովն, Բ Էջմիածնին, Գ Զ փխ. Ղ, Բ որ 'որոշեցին։ 35 ԲԳ Անտի, Բ թվական, Գ թվականն։ 36 Գ Վիրքն։

ՀԶ (627) Թվականի[ն] տէր Կոմիտաս շինեաց զսրբոյն Հռիփսիմէի վանքն։

ԶԸ (639) Թվականին ելն տաճկաց ի Հայս։[3]

ՃԲ (653) Թվականին շինեաց Ներսէս հայրապետն զսուրբն Սարգիս ի Դվին և զՎիրապն սուրբ [Գրիգոր]։

ՃԺԸ (669) Թվին հայրապետն Անաստաս կոչէ առ ինքն զմեծն Անանիա, անշարժ կարգել զտոմարս մեր. և արարեալ մեծաւ ջանիւ, և իբրև կամեցան ժ|ո|ո|մս առնել վաղճանաւ սուրբն Անաստաս։

ՃԻԳ (674) Թվին երևեցաւ խաչն ‖ Վարաղայ։ 288բ

ՃՀԱ (722) Թվին Յոհան Օձնեցին պայծառացաւ ի Հայս։

ՄԻԳ (774) Թվին շրջի տէր Յեսային մուրացիկ։

ՄԼԵ (786) տէր Սողոմոն շինէ զՄաքենի։

ՄԽԷ (798) Թվին Սահակ և Յովսէփ կատարեցան ի Կարնոյ քաղաքն։

ՅԽԱ (892) Թվին տէր Մաշտոց ԺԸ (10) ճգնաւորաւ պայծառանայր։

ՅՂԸ (949) Թվին Սմպատ Տիեզերակ[ա]լն հիմնարկեաց զկաթուղիկէն Հանի։

ՆԽԲ (993) Թվին կատարեաց Կատրամիտէ զսոյն կաթուղիկէ։

ՆԺԴ (965) Թվին շինեցաւ Յաղբատ քան զՍանահին, ԺԱ (11) ամաւ յառաջ։

ՆԻԸ (979) Թվին թագաւորն Սմպատ պարսպէ զՀանի։

ՆՁԹ (1040) Թվին Սմպատ Մաքրիստոսն զԲգնայրն Դունայ շինեաց։[4]

ՇՀԱ (1122) Թվին թագաւորն Դաւիթ էառ զՏփխիս։

ՇՀԴ (1124) Թվին թագաւորն [Դաւիթ] էառ զՅանի ի տաճկէն և մեռաւ ‖ և թագաւորեաց որդի նորա Դեմետրէ։ 289ա

ՈԷ (1158) Թվին փոխեցաւ առ Քրիստոս թագաւորն Դեմետրէ. և նստաւ աթոռ նորա Դաւիթ։

ՈԺ (1161) Թվին թագաւորեաց մեծն Գուրգի և եհար զՇահիարմէն սաստիկ պատերազմաւ։

---

1 Б Յօթանասուն և Զ փխ. ՀԶ, Կոմիտասն, БГ զսուրբն։ 2 Б Հռիփսիմէ, Г Հռեփսիմէ, Б վանք, Г վասն (պետք է լինի վանս)։ 3 Б տաճաց։ 4 Г տէր Ներսէս։ 4—5 Б և Սարգիս զսուրբ Վիրապն փխ. զսուրբն Սարգիս ի Դվին։ 4 Г զսուրբ։ 5 Г ի Վիրապն փխ. զՎիրապն։ 6—9-րդ տողերը БГ չիք։ 10 БГ ՃԺԴ փխ. ՃԻԴ, թվականին, Г սուրբ խաչն։ 11 БГ թվականին, Г Աւձնեցին։ 12 БГ թվականին, Г շրջի չիք, Б Նսային, Г Յեսային, Б մուրացիկ չիք, Г մուրացիկն։ 13 Б ՄԼԱ փխ. ՄԼԵ, БГ թվականին (տէր), Б զՄաքենիս, Г զՄաքենին։ 14 БГ թվականին, Г Կարգնո քաղաք։ 16 БГ թվականին։ 18 БГ ՅՂԹ փխ. ՅՂԸ, Г [թ]վականի, Б Նզերակալն, Г Նզրակալն։ 19 БГ Յանի փխ. Հանի։ 20 Б ՆԽԹ փխ. ՆԽԲ, Г թվականի[ն], Կտրամիտէ, Б զայն փխ. սոյն, БГ կաթուղիկէն։ 21 Г թվականի[ն], Б Հախպատ, Г Հաղբատ։ 21—22 Б և Սանահին ի կնոջէն Աշոտոյ Շահինչի (sic) Ժ ամաւ յառաջ շինեցաւ Հաղպատ, քան զՍանահին փխ. քան զՍանհաին ԺԱ ամաւ յառաջ։ 21 Г Սանահին, 21—22 Г ԺԱ ամաւ յառաջ չիք։ 23 Г թվականի[ն], БГ Սմպատ, Б պարսպեաց, БГ զԱնի։ 24 Б ՆԽԹ փխ. ՆՁԹ, Г թվականի[ն], Սմպատ, Б Մաքիստրոսն, Г զԲգնայր, Б Տունայ փխ. Դունայ։ 25 Б շինեաց չիք։ 26 թվականի[ն], զՏփխիստ։ 22 թվականի[ն], զԱնի։ 29 թվականի[ն], Դեմեարէ։ 30 յաթոռ նորայ։ 31 թվականի[ն]։

ՈԺԲ (1163) թվին Ել[դ]կուզ աթափակն ի Ցանի ի մեծն Գորգէ էառ զնա։

ՈԽԵ (1196) թվին թագաւորեաց Հայոց Լևոն։

ՈԽԹ (1200) թվին խանկարուն զատկին և սուտ գտան Վիրք և Ցոյնք, բայց ի Հայոց։

ՈԾԲ (1203) թվին Ցռանգն էառ զթագաւորութիւն Հոռոմին։[6]

ՈԾԹ (1210) թվին զԻւանէ աթապակն կալան ի Խլաթ։[8]

ՈՀԱ (1222) թվին մեռաւ թագաւորն Լևոն։

ՈՀԷ (1228) թվին Խորազն ել ի Հայս,[7] որ հայրն Ցոհանու հաւատաց ի Քրիստոս։

ՈՁ (1231) թվին թաթարն ը[զ]Խ[որ]ազմն կոտորեաց և զԳանձակ էառ։

ՈՁԷ (1238) թվին էառ թագաւորն զԼօռէ ‖ և զՑանի։[8] 289բ

ՈՁԸ (1239) թվին խաւարեցաւ արեգակն. ի սոյն ամի մեռաւ Աւազն։[9]

Ձ (1251) թվին Վանական վարդապետն մեռաւ[10]. և Մանկուն խանն թագաւորեաց։[11]

ՁԳ (1254) թվին Արղուն խանն նստաւ։

ՁԸ (1259) թվին Դաւիթ թագաւորն Վրաց Ցափխազք եմուտ։[12]

ՁԺ (1261) թվին սպանաւ Զաքա[ր]իայ և Պազտատ աւերաց։[13]

ՁԺԱ (1262) թվին Հուլայուն խանն նստաւ։

ՁԺԳ (1265) թվին Արաղայ խանն նստաւ։

ՁԺԶ (1267) թվին Արղուն խանն նստաւ։

ՁԼԳ (1284) թվին Քեզաթու խանն նստաւ։

ՁԼԱ (1282) թվին Ահմատ խանն նստաւ։

ՁԽԲ (1293) թվին Բահատին խանն նստաւ։

ՁԽԶ (1297) թվին Ղազան խանն նստաւ։

ՁԾԲ (1303) թվին Խարբանդա խանն նստաւ։

ՁԿԶ (1317) թվին սուլթան Բուսաիթն նստաւ։[14]

ՁՂ (1341) թվին Սոթի բէկն նստաւ։

‖ ՁՂԳ (1344) թվին շեխ Հասան նստաւ։ 290ա

ՁՂԶ (1347) թվին Աշրաֆն նստաւ։

ՊԾԵ (1406) թվին Զօպան խան նստաւ։[15]

ՊԼԵ (1386) թվին Թամուր խանն նստաւ և գնաց մինչև ի Գրմըշխ և եկն ի Հայս. եկաց ամս ԺԷ (17) ի Սամարղանդ մեռաւ։

ՊԾԳ (1404) թվին Ղարա[16] Ցուսուֆն նստաւ։ Մսրա եկն ի Թարվէզ. ԺԵ (15) տարի թագաւորեաց։

ՊԾԶ (1407) թվին էզ Ալին Մսրա եկն, զԱրճէշ շինեաց զզումբէթն ըռազին։

ՊԿԷ (1418) թվին Իսկանդար[17] միրզան թագաւորեաց։

---

1 Թվականի[ն], ի մեծն չիք։ 2 Գուրզի, զնայ։ 3 Թվականի[ն]։ 4 Թվականի[ն], զատիկն։ 5 և Վիրքն, Ցոյնքն։ 6 Թվականի[ն], զթագաւորութիւնն, Հռոմին։ 7 Թվականի[ն]։ 8 Թվականի[ն]։ 9 Թվականի[ն], հայն փխ. հայրն, Ցոհաննու։ 11 Թվականի[ն], զԽորազն։ 12 էառ զԳանձակն։ 13 Թվականի[ն], գգաւոէ փխ. զլօռէ, զԱնի։ 14. Թվականի[ն]։ 16 Թվականի[ն]։ 16—17 Մանուկ փխ. Մանկուն։ 18 Թվականի[ն], Արղխուն։ 18 և 19 տողերի արանքում՝ ՁԷ Թվականի[ն] Հուլաուն խանն նստաւ։ 19 Թվականի[ն]։ 20 Թվի, աւիրեաց։ 21 Թվի, Հուլայու։ 22 Թվի Արայխան, խանն չիք։ 23 Թվի։ 24 Քեզայոյ։ 25 Թվականի[ն], Ահմաթ։ 26 Թվի, խան։ 27 Թվի, խան։ 28-րդ տողը չիք։ 29 ՁԾԱ փխ. ՁԿԶ, Թվականի[ն], Բուսաիթն չիք, խան նստաւ։

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա

1. Սույն խորագիրը վերցրել ենք Ա տարբերակից։

2. Խոսքը վերաբերում է դեպի Անդրկովկաս մոնղոլների առաջին արշավանքին, որը տեղի է ունեցել 1220 թ.։ Այս մասին տես I ժամանակագրություն, էջ 26, 29, ծանոթ. 28։

3. Բնագրում «էջ» ձևով։ Եվ իրոք Մանկու (Մունկէ) ղանը դահը ստանձնել է 1251 թ. (տես Лэн-Пуль „Мусуль. династии" стр. 117)։ Թագավորելով մինչև 1257 թ. ըստ Լեն-Պուլի (նույն տեղ, էջ 177), 1259 թ. ըստ Բարտոլդի (նույն տեղ, էջ 177, ծանոթ. 1)։

4. Հեղինակը նկատի ունի Հայաստանում և այլուր աշխարհագիր անցկացնող Արղունին, որին Կ. Գանձակեցին կոչում է «Մեծ ոստիկանն Արղունն», էջ 374։

5. Տես էջ 121, ծանոթ. 1։

6. Հուլաուն Բաղդատը գրավել է 1258 թ.։

7. Խոսքն արդյո՞ք Հուլաուի մասին է, որն իշխել է 1256—1265 թ. թ.։

8. Տես էջ 121, ծանոթ. 2։

9. Տես էջ 121, ծանոթ. 4։ Խոսքը վերաբերում է Խաչենի իշխան Հասան Ջալալի սպանությանը։ Հմմտ. Կ. Գանձակեցի, էջ 373—376։

10. Տես էջ 121, ծանոթ. 5։

11. Տես էջ 121, ծանոթ. 3։

12. Տես էջ 121, ծանոթ. 6։

13. Տես էջ 121, ծանոթ. 7։

14. Տես էջ 111, ծանոթ. 3։

15. Տես էջ 111, ծանոթ. 3։

16. Տես էջ 121, ծանոթ. 14։

17. Եթե խոսքը վերաբերում է Ջելալիների հիմնադիր շեյխ Հասան Բուզուրգին, ապա նա իշխել է 1336—1356 թ. թ. (Лэн-Пуль „Мусуль. династии" стр. 207) իսկ Հասան Կուչյուկը տակավին սպանվել էր 1343 թ.։

18. Տես էջ 121, ծանոթ. 16։

19. Տես էջ 121, ծանոթ. 18։

20. Տես էջ 100, ծանոթ. 135։

21. Լենկ-Թեմուրն իշխել է 1370—1405 թ. թ.։ Տես էջ 123, ծանոթ. 30։

22. Հեղինակը նկատի ունի Ղարա Յուսուֆի (Կարա-Կոյունլու Թուրքմեն ցեղից) երկրորդ անգամ գահ բարձրանալը, սակայն այդ լինում է Լենկ-Թեմուրի մահից (1405 թ.) հետո և տևում է մինչև 1420 թ.։ (Տես և հմմտ. «Այրարատ», էջ 328)։

23. Ղարա-Յուսուֆի մահն ընդունված է նշել 1420 թ. (տես և հմմտ. Լեն-Պուլ „Мусуль. династии" էջ 214, Ալիշան «Այրարատ», էջ 328)։

24. Խոսքը վերաբերում է Շահռուխի արշավանքին։

25. Տես և հմմտ. էջ 123, ծանոթ. 41։

26. Հմմտ. Թ. Մեծոփեցի, էջ 107։

27. Հմմտ. Հ. Աճառեան «Յուցակ հայերէն ձեռագրաց Թաւրիզի», Վիեննա, 1910, էջ 103, Ե. Լալաեան «Յուցակ հայերէն ձեռագրաց Վասպուրականի», էջ 428, և "A catalogue of the Armenian manuscripts in the Britisch Museum" London, 1913, p. 95։

28. Այս արշավանքը տեղի է ունեցել 1459 թ.։ Այդ մասին տես Ոստանում ընդօրինակած

Ճաշոցի հիշատակարանը, Ակինեան «Գաւաղանագիրք կաթողիկոսաց Աղթամարայ», Վիեննա, 1920, էջ 98—99։

29. 1466 թ. ընդօրինակած Հայսմաւուրի հիշատակարանում Զաքարիայի հաջորդ Ստեփաննոսի մասին դրված է. «և ի հայրապետութեան նորընծայ տէր Ստեփաննոսին Աղթամարայ...» («Նոտարք», էջ 225)։ Այս հիման վրա կարծում են, որ Զաքարիան մահացել է 1465 թ. վերջերին («Ազգապատում», էջ 2170)։ Մինչդեռ Ակինյանը Զաքարիայի կաթողիկոսական տարիները նշում է 1434—1464 թ. թ. («Դաւաղանագիրք կաթողիկոսաց Աղթամարտայ», էջ 85)։

30. Հմմտ. Ն. Ակինեան «Գաւաղանագիրք կաթողիկոսաց Աղթամարայ», Վիեննա, 1920, էջ 85—108։

31. Խոսքը վերաբերում է Ջհանշահի սպանությանը, այդ մասին տես ներքևում՝ էջ 168, 175, ծանոթ. 14, էջ 194։

32. Հմմտ ներքևում էջ 168։ 1468 թ. նավասարդ ամիսը կսկսվի 1467 թ. նոյեմբերի 24-ին, իսկ նույն տարվա վարդավառը կընկնի հուլիսի 24-ին. այսպիսով բնագրի «ի նաւասարդէն մինչև ի վարդավառն» վկայությունը կհամապատասխանի 1467 թ. դեկտեմբերից մինչև 1468 թ. հուլիսի 24-ը։ Նշանակում է Հասան Ալու իշխանությունը տևել է 7 ամսից մի քիչ ավել։ Հմմտ. Ներքևում, էջ 194։

33. Հասան Ալին շախչախվեց 1468 թ. հուլիսի վերջին Մարանդում տեղի ունեցած ճակատամարտում (տես XI ժամանակագրություն, ծանոթ. 15), որից հետո Կարա-Կոյունլուների տիրույթներն անցան Հասան բեկին։ Բնագրի այն վկայությունը, թե Ուզուն Հասանը Թավրիզում թագավորել է 9 տարի, ստույգ է, որովհետև Ուզուն Հասանը մահացել է 1478 թ. հունվարի 5-ին։ (Տես XI ժամանակագրություն, ծանոթ. 23)։

34. Հեղինակը նկատի ունի Ուզուն Հասանի և օսմանական սուլթան Մուհամմեդ II-ի միջև 1472—1473 թ. թ. տեղի ունեցած կռիվները, որի ժամանակ 1473 թ. օգոստոսին, Դերջանի մոտ Ուզուն Հասանը պարտվեց օսմանցիներից և փախավ։ Տես XI ժամանակագրություն, ծանոթ. 21)։

35. Հմմտ. XIII ժամանակագրություն, ծանոթ. 5։

36. Սույն վկայությունը հաստատում են Ջ. Բարբարոն և Ջ. Անջիոլելլոն (տես «Ուղեգրություններ», հ. Ա, էջ 204—205, 267—269), իսկ Ուզուն Հասանի մահվան մասին տես վերևում, ծանոթ. 33։

37. Տես XIII ժամանակագրություն, ծանոթ. 7։

38. Խոսքը վերաբերում է Ցաղուբի քաջ զորավար Սուլեյման բեկ Բիժան օղլու և Բայանդուր բեկի վարած կռիվներին՝ Եգիպտոսի և Սիրիայի սուլթան Աշրաֆ Սեյֆ-ադ-դին Կայիթ բեյի դեմ (1468—1495 թ. թ.)։ Սակայն երկու բանակների ճակատամարտը տեղի է ունեցել 1480 թ. Ռուխի մոտ, որտեղ մամլյուկները պարտվել են (տես Петрушевский" Гос а Азербайджана в XV в." (Сборник статей... выпуск I, стр 17):

39. Խոջա Միրաքի նահատակությունը Թավրիզում տեղի է ունեցել 1486 թ. մարտի 24-ին, ուրբաթ օրը։ Տես «Հայոց նոր վկաներ», էջ 322, Ձեռ. № 6273, էջ 199ա—202ա։ Խոջա Միրաքի նահատակության մասին խոսում է նաև Ջ. Բարբարոն (տես «Ուղեգրություններ», հ. Ա, էջ 213—214)։։

40. Հմմտ. XIII ժամանակագրություն, ծանոթ. 10։

41. Հմմտ. XIII ժամանակագրություն, ծանոթ. 13։

42. Հմմտ. նույն տեղ։

43. Հմմտ. նույն տեղ։

44. Հմմտ. նույն տեղ։

45. Հմմտ. նույն տեղ։

46. Հմմտ. նույն տեղ, ծանոթ. 22։

47. Հմմտ. նույն տեղ, ծանոթ. 23։

48. Սույն հատվածի առաջին բառն աղավաղված է։ Խոսքն արդյո՞ք չի վերաբերում սուլթան Սելիմ I-ի և շահ Իսմայիլի 1514 թ. Չալդիրանի ճակատամարտին։

49. Այնուհետև երկու բնագրերի շարունակությունը տարբերվում են միմյանցից, ուստի վերջիններս ներկայացնում ենք առանձին-առանձին։

50. Հեղինակը նկատի ունի Սուլեյման I-ի և շահ Թահմազի 1550—1554 թ. թ. պատերազմները։ Բնագրի «ՁՍահաթն» երկիրը ընկնում է պատմական Երասխաձորի մեջ (Արշարունիքում), Արաքսի աջ ափին, Կողբի մոտ, «...յերկիրն Սահաթոյ որ է յայնկոյս գետոյն Երաս-

խայ ի կողմն Կողբայ...» (Ա. Դավրիժեցի, էջ 228, տես նաև 81, հմմտ. Ալիշան «Տեղագիր Հայոց Մեծաց», էջ 65)։ Այս երկրի մի մասը՝ Երևանը Սուրմարիով կոչվում էր նաև Սահաթափոս կամ Սահաթ-Չուխուր (պարս. երջանիկ հովիտ-փոս)։

51. Վրաց թագավոր Լուարսաբ I-ը, թագավորել է 1534—1558 թ. թ.։

52. Վրաց թագավոր Սիմեոն I-ը թագավորել է 1558—1600 թ. թ.։

53. Իրականում 1576 թ.։

54. Իսմայիլ II, ըստ Լեն-Պուլի 1578 թ.։

55. Մանրամասն տես Ա. Դավրիժեցու մոտ, էջ 115—142։

56. Տես XIII ժամանակագրություն, ծանոթ. 36։

57. Խոսքը Երևանի ետ գրավման մասին է։ Տես և հմմտ. XIII ժամանակագրություն, ծանոթ. 39։

58. Շահ Սեֆի I, թագավորել է 1628—1642 թ. թ.։

59. Այս հատվածից հետո բնագիրը շարունակել է այլ անձնավորություն, այդ երևում է շարադրության ոճից։ Հետևապես Բ տարբերակում առաջարկվող ժամանակագրության սկզբնական բնագիրը շարունակվել է երկու անձնավորության կողմից։

60. Հմմտ. վերևում, էջ 151, ծանոթ. 50։

61. Ընդգծված հատվածը գրված է աջ լուսանցքում։

62. Հմմտ. XIII ժամանակագրություն։

63. Այսինքն՝ օգոստոսի 12-ին։

64. Իրականում 1694 թ.։

Բ

1. Բնագրում վերնագիրը գրված է կարմիր թանաքով։

2. Առաջարկվող ժամանակագրության Ա և Բ տարբերակների աշխարհի արարչագործության ու եկեղեցական տրադիցիոն պատմության վերաբերող հատվածներն իրար ծածկում են, իսկ Լ-ն բավական ընդարձակ է, որովհետև վերջինս պատմական արժեք չի ներկայացնում, ուստի այդ հատվածի տարընթերցվածքները բաց թողինք։

3. Տես վերևում, էջ 28, ծանոթ. 3։

Ինչպես արդեն նշել ենք (էջ 141), սույն ժամանակագրության առաջին հատվածը I ժամանակագրությանը շատ մոտ է, ուստի բնագրին անհրաժեշտ ծանոթագրություններ չենք տա, այդպիսիք տես էջ 28—29։

4. Ժամանակագրության Բ տարբերակն այստեղ ընդհատվում է։ Տողատակի մնացած տարընթերցվածքները վերաբերում են Գ տարբերակին։

5. Տես և հմմտ. էջ 37, էջ 53, ծանոթ. 15։

6. Տես և հմմտ. էջ 38, էջ 54, ծանոթ. 18։

7. Խոսքը վերաբերում է Ջալալ-ադ-դինի դեպի Հայաստան կատարած արշավանքին։ Սկզբնական օրինակում եղել է «ՈՀՇ» փոխանակ «ՈՀէ»։

8. Բնագրի «ՈՁէ» նշումն անշուշտ գրչագրական սխալ է և պետք է լինի «ՈՁԵ»։

9. Հմմտ. Կ. Գանձակեցի, էջ 305, վերևում, էջ 42, 105։

10. Տես վերևում, էջ 58, ծանոթ. 59։

11. Տես վերևում, էջ 150, ծանոթ. 3։ Ինչպես արդեն նշել ենք, այստեղից սկսած սույն ժամանակագրության տեղեկությունները, ծածկում են IX ժամանակագրության Ա մասի համապատասխան հատվածին, ուստի անհրաժեշտ ծանոթագրությունները չենք կրկնի, այդպիսիք տես վերևում, էջ 150—151։

12. Հմմտ. Կ. Գանձակեցի, էջ 373։

13. Կ. Գանձակեցին Զաքարեի սպանությանը հատուկ գլուխ է նվիրում (էջ 377), բայց սպանության տարեթիվը չհիշելով, այն նշում է Խաչենի իշխան Հասան Ջալալի սպանությունից՝ 1261 թվից, հետու։ Բնագրի Բաղդատի ավերման վկայությունը վերաբերում է 1258 թ. Հուլաուի կողմից Բաղդատի գրավմանը, որը այստեղ նշված է իրականից երեք տարի ուշ։

14. Գ տարբերակն այստեղ ընդհատվում է։ Սույն դեպքը նույն տարբերակում դրված է ՉՄԱ (=1302) թվականի դիմաց։

15. Եթե խոսքը վերաբերում է Թամուրտաշի հորը՝ Չորանին, ապա նա սպանվել է 1327 թ.

Արու-Սեյիդի կողմից (տես էջ 100, ծանոթ. 135)։ Սույն ժամանակաշրջանում Զոբան անունով կառավարիչ հայտնի չէ։

16. Բնագրում «Ղուտա» ձևով։

17. Բնագրում «Իսկանգ» ձևով։ Խոսքը վերաբերում է Ղարա Յուսուֆի որդի Իսկանգարին, որն իշխել է 1420—1437 թ. թ. ըստ Լեն-Պուլի („Муc. династии". стр. 214) և 1421—1438 թ. թ. ըստ Ալիշանի («Այրարատ», էջ 328)։ Սույն հատվածից հետո A տարբերակում բնագիրը վերջանում է։ Ինչպես արդեն նշել ենք, սույն բնագիրը վերջից նույնպես թերի է։